ԻՍԿ Ո՞Վ Է ԻՄ ԸՆԿԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մեր նախքին երկու պաղգամեերի մեջ նշեցինք որ Աստծո Խոսքը մեր ամենօրյա հացն է և սնում է մեզ, նաև Աստծո Խոսքն ամեն օր մեզ համար կյանքի աղբյուր է: Այսօր կխոսենք որ Աստծո Խոսքը մեր շունչն ու կյանքն է: ՀԱՑ, ՋՈՒՐ, ԵՎ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ, ՍԵՐ:

> Վաթսունվեց գիրք: Հազար հարյուր ութսունինը գլուխ: Գրված լինելով 40 տարբեր մարդկանց միջոցով 1500 տարվա ընթացքում՝ Աստվածաշունչը շատ ավելին է, քան ընդամենը մի մեծ և հին գիրք.

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՂՈՒԿ. 10:25-37

23 Եւ դառնալով աշակերտներին՝ առանձին ասաց. «Երանի՜ այն աչքերին, որ կը տեսնեն այն, ինչ դուք տեսնում էք: 24 Ասում եմ ձեզ, որ բազում մարգարէներ և թագավորներ կամեցան տեսնել այն, ինչ դուք տեսնում էք, բայց չտեսան, և լսել՝ ինչ դուք լսում էք, բայց չլսեցին»:

25 Եւ ահա մէկ օրինական վերկացավ փորձում էր նրան և ասում. Վարդապետ, ի՞նչ պէտք է գործեմ որ հավիտենական կեանքը ժառանգեմ: 26 Եւ նա նրան ասաց. Օրէնքում ի՞նչ է գրուած, ինչպէ՞ս ես ընթերցում: 27 Նա էլ պատասխանեց և ասեց. Սիրիր քո Տէր Աստուծուն ամբողջ քո սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ զօրութեամբ և քո ամբողջ մտքով. և պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս քո անձը: 28 Եւ Յիսուս նրան ասաց. «Ճիշտ պատասխան տվեցիր, այդ արա՛ և կ՚ապրես: 29 Եւ նա կամենալով ինքն իրեն արդարացնել, ասաց Յիսուսին. Իսկ ո՞վ է իմ ընկերը: 30 Յիսուս պատասխանեց և ասաց. «Մի մարդ Երուսաղէմից Երիքով էր իջնում և ընկավ ավազակների ձեռքը, որոնք նրան մերկացրին, վիրավորեցին և կիսամեռ թողեցին ու գնացին: 31 Եւ դիպվածով մի քահանա էր իջնում նույն ճանապարհով, և նորան տեսավ և թողեց անցավ. 32 նույնպէս և մի Ղևտացի նույն տեղով անցնելիս, տեսավ և թողեց անցավ: 33 Մի սամարացի, որ ճանապարհորդում էր, եկավ նույն տեղով նրա մօտ և տեսնելով նրան՝ գթաց: 34 Եւ մօտենալով՝ կապեց նրա վէրքերը, վրան ձէթ ու գինի ածեց. և իր անասունի վրա դրած տարավ նորան մի իջևան, և խնամեց նրան: 35 Եւ հաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, իջևանատիրոջը երկու դահեկան հանեց տվեց և ասաց. «Խնամի՛ր նրան և ինչ որ ծախսես դրա վրա, իմ միյուս անգամ գալուն կը հատուցեմ քեզ: 36 Հիմա այն երեքից ո՞րն է երևում քեզ՝ թէ ընկեր է եղել այն ավազակների ձեռք ընկած մարդուն: 37 Նա էլ ասեց. Նա՝ որ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ արեց նորան: Ապա Հիսուսը նորան ասեց. Գնա, դու էլ այնպէս արա:

> ***Ովս. 6:6 -** 6 Որովհետև ողորմություն եմ ուզում և ոչ թէ զոհ, և Աստուծո գիտություն՝ քան թէ ողջակէզներ:*
>
> ***Մատ. 9:13 -** 13 Գնացէք սովորեցէք՝ թէ ի՞նչ է. Ողորմություն եմ կամենում՝ և ոչ զոհ. որովհետև ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության:*

1. ՎԱՐԴԱՊԵՏ, Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ԳՈՐԾԵՄ ՈՐ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԺԱՌԱՆԳԵՄ:

25 Եւ ահա մէկ օրինական վերկացաւ՝ փորձում էր նրան և ասում. Վարդապետ, ի՞նչ պէտք է գործեմ որ հավիտենական կեանքը ժառանգեմ:

Հռ. 3:28 - Ուրեմն համարում ենք, որ մարդը հավատքով է արդարանում առանց օրէնքի գործերի:

Հռ. 5:1 - Ուրեմն, մենք՝ հավատքով արդարացած լինելով Աստուծո հետ խաղաղութիւն ունենք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռով:

Եփ. 2:8 - Որովհետև շնորհքով էք փրկված հավատքի միջոցով. և սա ոչ թէ ձեզանից է, այլ Աստուծո պարգևն է.

2. «ՕՐԵՆՔՈՒՄ Ի՞ՆՉ Է ԳՐՎԱԾ, 3. ԻՆՉՊԵ՞Ս ԵՍ ԿԱՐԴՈՒՄ» (ՂՈՒԿԱՍ 10:25-27):

2 Օր. 6:4-5 - 4 Լսիր, ով Իսրայէլ, մեր Եհովայ Աստուածը՝ Եհովան մէկ է: 5 Եւ սիրիր քո Եհովա Աստուծուն բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ և բոլոր զօրութիւնովդ:

Ղև. 19:18 - Վրէժ չառնես, և քո ժողովրդի որդիներին ոխ չպահես, այլ քո ընկերին սիրես քո անձի պէս. Ես եմ Եհովան:

4. « ԻՍԿ Ո՞Վ Է ԻՄ ԸՆԿԵՐԸ»

- ***Օրինակ:*** *Ինչպես Ֆրանսիան նավեր ուղարկեց հայերին փրկելու համար... Ամերկայի միսոներերի նկարները թանգարանում թե ինչպես են օգնել որբ երեխաներին...* ***(Aurora Mardiganyan, 17 crosses)***

Հով. 15:13 - Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների (ընկերոջ) համար:

Մատ. 19:16-19 - 16 Եւ ահա մէկը մօտենալով նրան՝ ասաց. Բարի՛ վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որ յաւիտենական կեանքն ունենամ: 17 Նա էլ ասեց նորան. Ի՞նչու ես ինձ բարի ասում. ոչ ոք է բարի բայց միայն մէկն՝ Աստուած. իսկ թէ որ կամենում ես հավիտենական կեանքը մտնել, պահի՛ր պատուիրանները: 18 Նորան ասեց. Որո՞նք: Հիսուսն էլ ասեց, Սորանք. Մի՛ սպանիր, Մի՛ շնար, Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայիր, 19 Պատուի՛ր քո հօրը և քո մօրը, և սիրի՛ր քո ընկերին քո անձի պէս:

5. «ՅԻՄԱ ԱՅՆ ԵՐԵՔԻՑ Ո՞ՐՆ Է ԵՐԱՌՈՒՄ ՔԵԶ, ԹԷ ԸՆԿԵՐ Է ԵՂԵԼ ԱՅՆ ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԸՆԿԱԾ ՄԱՐԴՈՒՆ» (ՂՈՒԿԱՍ 10:36):

37 Նա էլ ասեց. Նա՝ որ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ արեց նորան: Ապա Հիսուսը նորան ասեց. Գնա, դու էլ այնպէս արա: